ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 34/11

Քաղ. Երեւան **25 հուլիսի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ.Շահինյան եւ իր 2011թ. հուլիսի 25-ի նիստում քննարկեց «Յունիոն» ՍՊԸ-ի կողմից 2011թ. հունիսի 20-ին «ՀԱՅԿՈԼԱ» ապրանքային նշանը 32-րդ դասի «գազավորված ջրեր, ոչ ալկոհոլային գազավորված ըմպելիքներ, զովացուցիչ ըմպելիքներ, մրգային գազավորված ըմպելիքներ, մրգային ըմպելիքներ, մրգահյութեր, օշարակներ» ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում 2010թ. հունվարի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումը:

Դիմումին կից ներկայացված են տեղեկություններ «HAY-COLA» ապրանքային նշանով արտադրված ապրանքների մասին, «Յունիոն» ՍՊԸ–ի մարքետինգային ծառայության հաշվետվությունը, «Յունիոն» ՍՊԸ–ի և «Պարադիզ» ՍՊԸ–ի միջև կնքված թվով 5 պայմանագրերի վերաբերյալ տեղեկանք «HAY-COLA» ապրանքային նշանի հեռուստագովազդային ծառայությունների մատուցման մասին, տեղեկանք տրված «Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ-ի կողմից մինչև 01.05.2011թ. գովազդային վահանակների համար «Յունիոն» ՍՊԸ–ի կատարված ծախսերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանք «HAY-COLA» ապրանքային նշանով մակնիշված ապրանքների արտահանման մասին:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ «HAY-COLA» ապրանքային նշանով մակնիշված ապրանքների արտադրությունը «Յունիոն» ընկերության կողմից սկսվել է 1997 թվականից:

1997–2009թթ. ընթացքում «HAY-COLA» ապրանքային նշանով մակնիշված արտադրվել է մոտ 17 միլիոն շիշ զովացուցիչ ըմպելիք ավելի քան 3 միլիարդ դրամ արժեքով,

ընդ որում առաջին տաս տարիների ընթացքում արտադրությունը տասնապատկվել է: Նշվեց նաև, որ «HAY-COLA» բառային մաս պարունակող ապրանքային նշաններով մակնիշված ապրանքները սկսած 1996թ. լայնորեն գովազդվում են ինչպես հայկական հեռուստաալիքներով՝ Պրոմեթևս, Հ2, ՀայՏՎ, Դար21, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության ՌՏՌ, ՆՏՎ և ՄԻՌ հեռուստաալիքներով, ինչպես նաև 1996–2010թթ. ընթացքում «Յունիոն» ընկերությունը «HAY-COLA» ապրանքային նշանով մակնիշված ապրանքները քաղաքացիական կամ տնտեսական շրջանառության մեջ մտցնելու համար կատարել է մի շարք գովազդային ծախսեր մոտ 1 մլրդ դրամի չափով: Նշվեց, որ «Յունիոն» ընկերությունը սկսած 1998թ. յուրաքանչյուր տարի իրականացնում է մարկեթինգային ուսումնասիրություններ, որոնց հիման վրա ճշգրտվում է ընկերության գովազդային քաղաքականությունը, արտադրանքի արտադրության քանակը և տեսականին:

«HAY-COLA» ապրանքային նշանով մակնիշված արտադրանքը սկսած 2000թ. մինչ օրս արտահանվում է ԱՄՆ և Կիպրոս, այս ընթացքում արտահանվել է 24 կոնտեյներ ավելի քան 60 միլիոն դրամի առժողությամբ, ինչն իրականացվել է «Յունիոն» ՍՊԸ–ի և «ECO WINE & SPIRITS INC.» ընկերության հետ կնքված՝ 10.11.1999թ., 20.09.2000թ. 13.06.2006թ պայմանագրերով.

Կոլեգիայի անդամը արձանագրեց, որ ներկայացված նյութերը համոզիչ են և հաստատում են «HAY-COLA» ապրանքային նշանի լայնածավալ օգտագործումը ՀՀ–ում և առաջարկեց դիմումը բավարարել մասնակիորեն և 2010թ. հունվարի 1–ի դրությամբ ՀՀ տարածքում հանրահայտ ճանաչել «HAY-COLA» համակցված ապրանքային նշանը ԱԾՄԴ 32–րդ դասի՝ «ոչ ալկոհոլային գազավորված ըմպելիքներ» ապրանքների համար:

Ներկայացված փաստարկները համոզիչ էին բողոքարկման խորհրդի համար, քանի որ հիշյալ ապրանքային նշանը օգտագործման արդյունքում լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության լայն շրջանակների համար այն ապրանքների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով ինչպես նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության Բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման «Կարգի» 81-րդ կետի 1-ին

ենթակետով և «Ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու մասին» կարգի դրույթներով

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Յունիոն» ՍՊԸ-ի 2011թ. հունվարի 1-ի դիմումը եւ «HAY-COLA» բառային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչել 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԱԾՄԴ 32–րդ դասի՝ «ոչ ալկոհոլային գազավորված ըմպելիքներ» ապրանքների համար:

1. Որոշման կայացման թվականը	25.07.2011
2. Հանրահայտ ապրանքային նշանի գրանցման համարը	46
3. Հանրահայտ ապրանքային նշանի անունը	«HAY-COLA»
4. Թվականը, որից սկսված ապրանքային նշանը հանրահայտ է ճանաչվում ՀՀ-ում	2010
5. Հանրահայտ ապրանքային նշանի իրավատիրոջ անվանումը եւ գտնվելու վայրը հասցեն	«Յունիոն» ՍՊԸ 0010 ք. Երևան, Սարյան 26/2
6. Ապրանքների եւ ծառայությունների Միջազգային դասակարգման դասերին համապատասխան խմբավորված այն ապրանքների եւ ծառայությունների ցանկը, որոնց նկատմամբ ապրանքային նշանը ճանաչվել է հանրահայտ	32–րդ դասի՝ «ոչ ալկոհոլային գազավորված ըմպելիքներ» ապրանքների համար

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան